Արձանագրություն N 6

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կողմից «ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիր բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների գնման նպատակով կազմակերպված թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

«31»-ը հոկտեմբերի, 2024թ.
սկիզբ՝ ժամը 10:00 րոպեին
ավարտ՝ ժամը 10:15 րոպեին

2024 թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 10:00-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գրության հիմքով, տեղի ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցու 31, ՀՎՀՀ՝ 0084644, էլեկտրոնային փոստի հասցեն՝ atdf@atdf.am) կողմից **«ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիր բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) արտահերթ նիստը, որին ներկա էին Հանձնաժողովի 7 անդամները՝

Հանձնաժողովի նախագահ ՝ Աշոտ Խաչատրյան
անդամներ՝ Գայանե Քարիմյան, Լիլիթ Պետրոսյան,
Լուսինե Ղազարյան, Վարդինե Իսահակյան, Արմինե Մակարյան

Նիստը նախագահում էր Աշոտ Խաչատրյանը, քարտուղարությամբ՝ Անահիտ Եղիազարյանի:

Նախագահը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ սույն նիստը հրավիրվել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գրության հիման վրա: Հայտարարեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, այնուհետև՝ ներկայացրեց նիստի օրակարգը.

1. Ներկայացված հայտերի գնահատման նիստի օրը տեղափոխելու մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Քննարկման և քվեարկման արդյունքում՝ կողմ՝ 7, դեմ՝ 0 ձայների մեծամասնությամբ

Որոշվեց

1.Ներկայացված հայտերի գնահատման նիստի օրը տեղափոխելու, և հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

1.1 Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվել է թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89 ծածկագրերով գնման ընթացակարգը, որի շրջանակներում, ըստ բացման նիստի արձանագրության, հայտեր են ներկայացվել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ, «Եղվարդշին» ԲԲԸ Կոնսորցիումի, «Լիլանարմ» ՍՊԸ և «Լուսէ- 16» ՍՊԸ կոնսորցիումի, «Ռոուդկոնստրակտ» ՍՊԸ, «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «Կա Էռ Քնսթրաքշն» ՍՊԸ, «Արտդիանշին» ՍՊԸ ՀԳ-ի և «Գրանդ Այլանս» ՍՊԸ-ի կողմից: Նույն արձանագրության համաձայն՝ հաջորդ նիստը նշանակվել է մասնակիցների կողմից՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ)

համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները և ներկայացված հայտի ապահովումների վերաբերյալ իսկությունների հաստատումը ստանալուց հետո 2-րդ աշխատանքային օրը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն թվականի հոկտեմբերի 29-ին հանձնաժողովի անդամներին են ներկայացվել վերը նշված տեղեկությունները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշեց գնահատման նիստը տեղափոխել և նշանակել 2024 թվականի նոյեմբերի 4-ին ժամը 11:00-ին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ուլնեցու 31, 2-րդ հարկ, 209 սենյակ:

Հանձնաժողովի նախագահ՝

Աշոտ Խաչատրյան _____

անդամներ՝

Գայանե Քարիմյան _____

Լուսինե Ղազարյան _____

Վարդինե Իսահակյան _____

Արմինե Մակարյան _____

քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան _____